

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿ ԱՌ Ա. Զ.

(ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈՒԹԵԼԵԱՆԻՆ ԱՌԹԻԻ)

... Մենք մեր բոլոր սրտով, մեր բոլոր հոգիով կ'օրհնենք զՁեզ եւ Ձեր Յորեկանը շնորհաւորելով կը մաղթենք որ տակաւին ապրիք, երկար ապրիք որ Ձեր գրչով եւ լեզուով գրէք աւ խօսիք Հայութեան նախնոր ցաւերը, սրտանժկի պատահարները, քանդի, սիրելի Զօպանեան, ինչպէս որ Դուք կը տեսնէք, սեւաթոյր ամպեր պատած են զմեզ, ազգովին սրտաբեկ ու թախծալից, շուաւած ու չփոթած, անաւակալ եւ անախլոնթաց ներքին ու արտաքին հաբուածներէ ճրնչուած ու ճգմուած, խելակորոյս նաւու մը նըման կը տարուբերինք աշխարհի փոթորկուողիկէանին մէջ ի խնդիր խաղաղ եւ ապահով նաւահանգիստի մը, զոր չենք դտներ: Հայութեան երկնակամարը աղջամուղջով սեւցած, արեւին չքաղած է, լուսնինիս անյայտացած, եւ աստղերնիս աներեւութացած են եւ մենք խաւարի թանձրութեան մէջ առխաբխափ քայլեր կը փոխենք ամէն մարդկեան խութեր ու խոչերու հանդիպելով եւ անդունդի մը մէջ դահալիժեկու սարսափով առլի, եւ երանի կուտանք անոնց որ ի Տէր ննջեցին եւ

չտեսան այն արհաւիրքները եւ սարսափելի տեսարանները որոնց ակնաստես կամ ականջաւուր կ'ըլլանք: Հայութեան խոնջած ուսին դրուած լուծը կարի ծանր եւ անտանելի է, եւ ես ինչստան տարիներու բեռան ներքեւ կ'ըսծ, թէպէտ կեանքիս մեծ մասը ցաւի, տառապանքի մէջ անցուցած, ազգային դառնութեան բաժակը ցմբուր քամած ըլլալով հանդերձ, ներկային առջեւ սահմուկած եմ եւ հանդուցն խորենացուցն Մովսիսի դողացող շրթունքներէս դուրս կը թոփն «Ողբած գեղջ Հայոց աշխարհ, հանուրց հիւսիսականաց վեհահոյն»: Ձեր Յորեկանի առթիւ պատգամ մը ունիմ տալիք՝ Ձեզ եւ Ձեզանման մտաւորականներու, մէկ կողմ դրէք սկզբունքի, տեսակէտի տարբերութիւնները, իբրաւ մօտեցէք փոխադարձ դիւրողութիւններով, միախառնուեցէք, զիբար սիրեցէք, զիբար յարգեցէք, իբրաւ օգնեցէք: այս կը պահանջէ ազգային օգուտը եւ ներկայ տարւած կացութիւնը:

Ողջունիւ եւ օրհնութեամբ

Աղօթարար

ՍԱՀԱԿ Բ. ԿԹ. ԿԻԼԿԻՈՅ